Ռաֆֆի
Հուշագրություններ

ՖԻԼԻԵՏՈՆՆԵՐ

ԱԶԳԱՍԵՐ

Հասարակ կերպով կահավորված մի սենյակ է. նրա գլխավոր զարդարանքը կացուցանում են՝ «Ոգի Հայաստանի» պատկերը, որ կախված է աշխատության գրասեղանի հանդեպ, նրա մի կողմում Վարդանի, մյուս կողմում Ներսես Ե-րդի պատկերները, փոքր-ինչ հեռու պատի վրա ամրացրած է Կիպերտի աշխարհացույցը, ուր կարմիր մելանով խազած են Արտաշատ, Վաղարշապատ, Անի, Հայաստանի զանազան հին քաղաքները: «Կռունկ», «Հյուսիսափայլ», «Ճըռաքաղ», Վենետիկի, Վիեննայի և Կ. Պոլսի զանազան հրատարակությունները դիզված են այս և այն պահարաններում:

Այդ սենյակը պարոն Մեկենասի մենարանն է: Ահա՛ նա նստած է գրասեղանի հանդեպ, գրում է, աշխատում է, նա միշտ գրում է: Մի մարդ, խոշոր կազմվածքով, մարմնի զարգացման մեջ չկա ոչինչ թերություն: Մենարանին կից սենյակի դռները շառաչմամբ ետ գնացին. Արշակն ու Տիգրանը աղմուկով ներս մտան: Երեխաներից մինը թռավ, գրասեղանի վրայից խլեց մի բան ու սկսեց վազ տալ եղբոր հետքից:

—Այդ ի՞նչ աղմուկ է, — գոռաց հայրը:

—Այս լինեյկով պիտի խփեմ Արշակին, նա իմ մազերից ձիգ տվավ, — ասաց Տիգրանը:

—Չեն ասում լինեյկա, ասում են քանոն, — ուղղեց հայրը որդու սխալը:

—Քանոն, — կրկնեց Տիգրանը և շարունակեց վազ տալ Արշակի հետքից:

Արշակը շփոթվելով եղբոր հալածանքից, դիպավ բոլորակ սեղանին, սեղանը վայր ընկավ և նրա վրա դրած ջուր խմելու բաժակը կոտրվելով, սփռվեցավ հատակի վրա:

Տիգրանը հասավ յուր նպատակին, եղբայրը, բացի նրանից, որ ձիգ էր տվել յուր մազերը, ահա գտնվեցավ և մի երկրորդ հանցանքի մեջ:

— Տե՛ս, ինչ արավ, հայրիկ, ստաքանը կոտրեց:

— Չեն ասում ստաքան, ասում են բաժակ, — հայրը դարձյալ ուղղեց որդվո սխալը:

—Բաժակ, — կրկնեց Տիգրանը և առաջ տարավ յուր բողոքը Արշակի դեմ:

—Նա այսօր ճաշին կզրկվի կեռաս ուտելուց:

Արշակը տխրեց, լսելով յուր պատիժը: Տիգրանն ուրախ էր: Նա արդեն իրան վրեժխնդիր եղած էր համարում:

— Հայրիկ, ես գիտեմ, թե ինչպես են ասում հայերեն խիարին, Տիգրանը չգիտե, — խոսեց հանցավորը: — Վարունգ:

— Իսկ ձմերուկի՞ն:

— Մեղրապոպ:

— Խարբուզակի՞ն:

— Սեխ:

Եվ իրավ, այդ բառերից և ոչ մինը չգիտեր Տիգրանը:

— Ես ներում եմ քեզ, Արշակ, մյուս անգամ այդպիսի անկարգություն չանես:

Տիգրանը մնաց դժգոհ հոր ներողամտության վրա և սկսավ լաց լինել:

Սույն միջոցին անկյունից լսելի եղավ մի օտարոտի ծիծաղ՝ խի՛... խի՛... խի՛ ..., որին հետևեցին այս խոսքերը: — Քո բանը բարդ է, Տիգրան...: Դարձյալ ծիծաղ՝ խի՛... խի՛... խի ՛...:

Տիգրանը առանց պատասխանելու դուրս գնաց, Արշակը նույնպես վազեց նրա հետքից, որ գնա փոքրիկ աղախնին՝ Նինուցային հաղորդե յուր ազատությունը:

Ծիծաղը անկյունից տակավին շարունակվում էր: Փոքրիկ կատվիկի նման մի մարդ, ալևոր գլխով, ակնոցավոր աչքերով, չէր կարողանում իրան պահել այն զվարճությունից, որ պատճառեց նրա մեջ երեխաների կռիվը: Այդ մարդուն ամեն րոպե կարելի էր այդ սենյակի մեջ գտնել, նա հաշվվում էր նույն կարասիների թվում, որոնք դրած էին նույն սենյակի մեջ:

Պարոն Մեկենասի սեղանի կատուներից մինն էր, և նախանձավոր երկրպագու նրա վեհությանը: Եվ այդ պատճառով մենք նրան կկոչենք Փիսո, որովհետև նա ուներ յուր մեջ փիսոյի շողոքորթությունները:

—Ահա այսպես՝ կրթությունը պետք է սկսվի ընտանիքից: Երեխայությունից պետք է մտցնել մանուկների մեջ սեր դեպի մայրենի լեզուն և ազգային ավանդությունները, այդ ամենագլխավորն է:

—Երանի թե բոլոր ծնողները հետևեին ձեր օրինակին, — պատասխանեց Փիսոն, — այն ժամանակ մեր ազգը բախտավոր կլիներ...:

ԵՍ ՖԵԼԻԵՏՈՆԻՍՏ ՉԵՄ

Ես ֆելիետոնիստ չեմ: — Զանազան կարծիքներ զոկերի ծագման մասին: — Իմ պատմական գյուտը: — Սատանա և սատանայություն բառերի նշանակությունը: — Զոկերի վաճառականական հանճարը: — Բարեգործությունը որպես շահեցողության միջոց:

Ես ֆելիետոնիստ չեմ և ոչ էլ ֆելիետոն գրելու նպատակ ունեմ: Ես պետք է կարկատեմ մի քանի անկապ դատումներ, ընթերցողը ինչ անուն կուզե, թող տա:

Ագուլիսից եմ գրում և խոսքս հարկավ Ագուլիսի և ագուլեցոց վրա պետք է լինի:

Ես արել եմ մի պատմական գյուտ զոկերի ծագման մասին: Վաղուց այդ հարցը վիճաբանության առարկա էր: Մեսրոբ Թաղիադյանցը զոկերին Ջոհակի կամ մարաց ցեղից էր դուրս բերում: Գիտենք, որ մարերը այժմյան քրդերն են: Արդարաև բնավորության կողմից զոկերը քրդերի նման են, այն զանազանությամբ միայն, որ քուրդն անկիրթ ավազակ է, իսկ զոկը կրթված ավազակ: Առաջինը զենքով է կողոպտում, վերջինը՝ խելքով: Բայց ազգագրական կողմից տարբեր են: Կարապետ վարդապետ Շահնազարյանցը մի ուրիշ բան էր ասում, որ կրիտիկայից շատ ստոր է և նրա մասին խոսելն ավելորդ է, «Մշակը» զոկերին հրեից ծագումից էր դուրս բերում և աշխատում էր նրանց նախապապին տանել հայր Աբրահամին կպցնել: Այդ ևս հավանական է, միայն զոկերի և հրեաների մի քանի հատկությունների միմյանց հետ ունեցած նմանության կողմից, — երկուսն էլ միևնույն կերպով խարդախ են, խորամանկ են, ստորաքարշ են և կոպեկի համար հոգի և մարմին տվող են, — բայց պատմական ճշմարտությունից զուրկ է զոկերի և հրեաների միևնույն ցեղից լինելը: Իմ բարեկամներից մեկը, մի բնագետ, ավելի էտնոգրաֆիական և ֆիզիոլոգիական տեսակետից նայելով, զոկերին ցիգանների ցեղին էր վերաբերում, և ասում էր, թե դրանք հայոց բոշաներ են և ավելի ոչինչ. Ես չեմ վիճում բարեկամիս կարծիքի դեմ, թե էտնոգրաֆիան և թե ֆիզիոլոգիան ցեղերի պատմության մի աղբյուր պետք է ճանաչել: Բայց պետք է ի նկատի ունենալ և այն, որ մի ցեղ դարերի ընթացքում կարող է այս և այն էտնոգրաֆիական և ֆիզիոլոգիական փոփոխություններին ենթարկվել, օրինակ, Դարվինի թեորիայով, կապիկների ապագա սերունդը կատարելագործվելով կարող է մարդու կերպարանք ստանալ: Այսուամենայնիվ բարեկամիս նկատողությունները բավական հետաքրքիր էին: Ցիգանները գորշ կամ մուգ-դեղին գույն ունեն, — զոկերն էլ նույնպես: Ցիգանները սև, վառվռուն և բոլորակ աչքեր ունեն, զոկերն էլ նույնպես: Ցիգանները կարճ և ծայրը բութ քիթ ունեն, — ոչ մեկ զոկ չեք գտնի, որ հայկական երևելի մեծ քիթն ունենար: Ցիգանները սև, փայլուն մազեր ունեն առանց գանգուրների, — զոկերն էլ նույնպես: Ցիգանները խանձված ձայն ունեն, — ոչ մեկ զոկ չեք գտնի, որի ձայնի մեջ մետալական հնչումներ լինեին, նրա կոկորդի մեջ, կարծես մի բան կա, որ խեղդում է: Ցիգաններն առհասարակ մանրիկ, նիհար և ջլուտ կազմվածք ունեն, — զոկերն էլ նույնպես: Եվ որ ավելի զարմանալի է, ցիգանների ֆիզիոլոգիական կազմվածքի մեջ կա մի հատկանիշ առանձնություն, որ միայն ցիգաններին է սեփական, այն է, որ նրանց ոտների սրունքները զուրկ են այն մալի մասնից, որ կոչվում է «կուկն» (икры): Բարեկամս ասում էր, ես քննել եմ հարյուրից ավելի զոկ տղամարդկանց և կնիկների սրունքները, և գտել եմ, որ բոլորը զուրկ են եղել «կկներից»:

Կենցաղավարության պայմանների և սովորությունների վերաբերությամբ նույնպես մեծ նմանություն էր գտնում բարեկամս զոկերի և ցիգանների մեջ: Օրինակ, ցիգանները թափառական կյանք են վարում, — զոկերն էլ նույնպես: Ցիգանները խաբեբա և անհավատարիմ են լինում, — ոչ մեկ զոկ չեք գտնի, որ հավատարմություն ունենար մինչև անգամ դեպի յուր եղբայրը, կինը և որդին: Ցիգանների գլխավոր արհեստն է մաղ գործելը, — մինչև այսօր Ագուլիսում մի ամբողջ թաղ կոչվում է «մաղ գործողների» թաղ:

Բայց ես այս բոլորը ենթադրություններ եմ համարում, որ զուրկ են պատմական ճշտությունից: Զոկերի ծագումն ավելի խորին հետազոտության կարոտ է: Կրկնում եմ, որ ես մի պատմական գյուտ եմ արել այդ մասին: Որքան պիտի զարմանաս, ընթերցող. երբ տեսնես, որ զոկը ամենևին

հայ չէ, և մինչև անգամ Ադամի որդին չէ, այլ նա ծագում է ստացել այն ժամանակ, երբ հայր Ադամը դեռ ստեղծված չի եղել, և երբ աշխարհի մեջ դեռևս ոչ հրեշտակ կար և ոչ սատանա:

Եթե ընդունենք, որ ժողովրդական լեգենդաները պահում են իրանց մեջ պատմական ճշմարտությունների տարերք, — ուրեմն իմ արած գյուտը պետք է ճիշտ համարել: Թողնենք զոկն ինքն խոսի յուր ծագումի մասին: Նա ասում է.

«Երբ դեռ երկինքը և գետինը չկար, մի աստված կար, դա մի չար աստված էր, որ կոչվում էր Ուրման (զրադաշտական Ահրիմանը, Արիմանը, Խարտմանը կամ մեր Արիմը.) նա ստեղծեց առաջ զոկին, հետո սատանային: Սատանան երբ աչքերը բաց արավ, տեսավ, զոկն այնտեղ կանգնած է, նա բողոքեց ասելով, տեր, ինձ էլ ինչո՞ւ համար էիր ստեղծում, երբ զոկը բոլոր աշխարհին բավական է: Տերը սատանային պատասխանեց. — «Վնաս չունի, որդի, դու էլ եղիր, զոկն էլ թող լինի, մեկմեկու հետ յոլա գնացեք, և աշխարհը չարությունով լցրեք»»:

Այս լեգենդը ամեն զոկի բերնում կրկնվում է մինչև այսօր և ամեն զոկ պարծենալով է հիշում, թե ինքն այնքան վարժ է սատանայության մեջ, որ նախաստեղծ սատանան նախանձվել է իրանց նախապապի վրա:

Հիմա տեսնենք, արդյոք զոկը հավատարի՞մ է մնացել յուր կոչմանը և ծագումին:

Զոկը սատանա և սատանայություն բառերը ամենևին չէ որոշում խելք և իմաստություն բառերից: Ասելով, նա շատ սատանա մարդ է, — պետք է հասկանալ շատ խելացի է, շատ իմաստուն է: Բայց խելքը և իմաստությունը զոկի հասկացողությամբ նույնպես իրանց առանձին նշանակությունն ունեն: Այդ ես կպարզեմ մի մասնավոր խոսակցությունով, որ ունեցա մի զոկ վաճառականի հետ:

— Այդ ինչպե՞ս վարժապետ է, — ասում էր վաճառականը մի ուսուցչի մասին, — ամենևին խելք չունի, նա ինչպես պետք է դաս տա:

— Ինչի՞ց եք հասկանում, որ նա խելք չունի, — հարցրի ես:

— Ինչի՞ց, — կրկնեց վաճառականը, — հարյուր անգամ ինձանից բան է գնել և ամեն անգամ ես խաբել եմ նրան, էլ ի՞նչ խելք պետք է ունենա: Բայց տես տիրացու Կարապետը, — խոսեց մի ուրիշ ուսուցչի վրա, — էնպես սատանա է, որ ամենին կխաբե:

— Ուրեմն, նա որ սատանա է, լավ էլ դաս կտա քո կարծիքով:

— Հալբաթ, — ասաց վաճառականը վճռական կերպով:

Բերենք մի քանի օրինակներ զոկերի վաճառականական սատանայությունների, այսինքն խելքի մասին:

Զոկերն իրենց վաճառականության համար ընտրում են առհասարակ մութ անկյուններ, ուր ժողովուրդն ավելի գռեհիկ և դեռ խավերի մեջ է լինում: Նուխիի գավառը, Կախը, և Լեզգիստանն իրանց մետաքսով զոկերի հարստության առաջին աղբյուրն են եղել: Մի զոկ ինձ պատմում էր, թե յուր հայրը նուխիի կողմերում մետաքս գնելու ժամանակ, ունեցել է մի կշեռք, որ միշտ յուր հետ

ման ածում և մետաքս էր գնում: (Գյուղացիք կշեռք չեն ունեցել, գնողներն իրանք պետք է տանեին): Այն կշեռքը, ասում էր նա, թեև մի հասարակ կշեռք էր, փայտյա լծակով, կաշուց շինած թաթերով, որ կախած էին լծակից նույնպես կաշիե փոկերով, բայց ուներ յուր մեջ մի այնպիսի գաղտնիք, որ, օրինակ, չորս ֆունտ ծանրություն ունեցող մետաքսը կարելի էր նրա մեջ երկու ֆունտ ծանրության հետ հավասարեցնել, ուրեմն և երկու ֆունտի տեղ ընդունել: Այդ գաղտնիքը, ասում էր նա, կայանում էր կշեռքի լծակի այն մասի մեջ, որ կոչվում է լեզվակ, որից բռնում և քաշում են: Այդ լեզվակն այնպես էր հարմարեցրած լծակին, որ եթե դեպի քարի կողմը թեքեիր, ծանրությունը կընկներ քարի կողմը և մետաքսը թեթև կգար, իսկ եթե մետաքսի կողմը թեքեիր լեզվակը, ծանրությունը դեպի այն կողմը կդառնար: Ուրեմն և գնողի կամքիցն էր կախված յուր կշեռքը միշտ այնպես գործ ածել, որ օգուտը յուր կողմը մնար թե գնելու և թե վաճառելու մեջ: Այդ կախարդական կշեռքին, ասում էր նա, մյուս վաճառականները հինգ հարյուր ռուբլի էին տալիս, բայց հայրս չէր ծախում:

Կշեռքի որոշված քարեր կամ չափեր, ասում էր Նա, այն կողմերում չկար, այլ քսան հատ ռուսաց արծաթ ռուբլիանոց մանեթների ծանրությունը հաշվում էին մի չափ, որ կոչվում էր... և զոկերը գտնում էին միշտ Եկատերինայի ժամանակից մնացած մեծ-մեծ մանեթներ և նրանով էին կազմում իրանց չափը, որ ավելի ծանր լիներ: Զոկերի այդ առևտրական խարդախությունների մասին շատ բաներ առակի ձև են ստացել: Օրինակ, մի մարդ մետաքս գնելիս ասում էր ռամիկ գյուղացիներին. «Տեսեք, այս իմ աջ ոտը 5 ֆունտի ծանրություն ունի, և դնում էր կշեռքի մի թաթի մեջ, մյուս թաթի մեջ լցնել էր տալիս մետաքսը: Նա ոտը հուփ էր տալիս, որքան ուժ ուներ, և փոխանակ 5 ֆունտի, 10 — 15 ֆունտ մե տաքս էր կշռում: Բայց մինչև տեղացիք այդ խարդախությունները հասկացան, զոկերն արդեն հարստացան:

Երևանի բամբակի առևտուրը նույնպես զոկերի ձեռքն է, որ փոխադրում են Մոսկվա: Մի զոկ, եթե ունի հարյուր հակ բամբակ, նրանցից մի 5 — 6 հակ միայն օրինակի համար բաց է անում և ցույց է տալիս մուշտարուն, մնացածը նրա համեմատ ընդունվում է: Բայց զոկը միշտ աշխատում է, որ ցույց տված հակերը լավ տեսակից լինեին, իսկ մնացածների մեջ ինչ զիբիլ ասես, ածում են: Բայց գնողները երբեմն ավելի սատանա (այսինքն խելոք) են լինում, քան թե ծախող զոկը և իրանք են ընտրում այն հակերը, որ պետք է բաց անեին նայելու համար: Մի այսպիսի հակից մի անգամ դուրս է գալիս մի ահագին իշի փալան: — «Այդ, երևի քո հոր վերարկուն է...», ասում է գնողը ծաղրելով:

Եթե ես պատկերահան լինեի և կամենայի նկարել Մամոնայի1 պատկերը, կնկարեի մի զոկ և նրա ձեռքին բռնել կտայի մի սև փող: Զոկի շահասիրությունը, զոկի ժլատությունը առասպելական ձև է ստացել ժողովրդի բերանում: Ո՞վ չի լսել այն անեկդոտը, թե զոկը պանիրը դնում է շուշայի մեջ, հացը դրսից քսում է, երևակայելով, թե պանիր է ուտում: Մի անգամ մի զոկ խանութը կողպած և ուրիշ տեղ գնացած լինելով, ճաշն անցած վերադառնում է, տեսնում է, որ որդին կանգնած խանութի առջև, հացը քսում է խանութի դռանը և ուտում է: — Էդ ի՞նչ ես անում, — հարցնում է հայրը: — Քաղցած էի, մի քիչ պանիր եմ ուտում, — պատասխանում է որդին: — Սատկա՛ծ, փորդ կրա՞կ էր ընկել, չէիր կարող սպասել մինչև դուռը բաց անեի, — ասում է հայրը և ապտակում որդու երեսին:

Բայց պանիրը որտեղի՞ց էր ուտում որդին, այստեղ է անեկդոտի գաղտնիքը: Կողպված խանութում շուշայի մեջ պանիր կար դրած, այդտեղից էր ուտում: Հայրը շուշային էր քսում հացը, որդին խանութի դռանը, վերջինը յուր ժլատության մեջ ավելի գերազանցում էր:

Զոկն ամեն բանի վրա շահասիրական կետից է նայում և ամեն գործի մեջ միայն յուր օգուտն է որոնում: Բարեգործությունը, որ պետք է հիմնված լինի զոհաբերության սկզբունքի վրա, նույնիսկ բարեգործության մեջ զոկը շահեր է պտրում: Ես կբերեմ մի երկու օրինակներ. — զոկը եկեղեցի է շինում, իսկ ինքը նույն եկեղեցու երեսփոխան է դառնում այն մտքով, որ մի տասը — քսան տարվա մեջ յուր արած ծախսը մութ ճանապարհներով դուրս բերե և մի բան էլ ավելի շահի: Այդ միևնույնը չէ՞ր լինի, եթե մի մարդ մի գործարան կամ զավոդ հիմներ: Զոկը աղքատաց խնամատարության համար հոգաբարձություն է հիմնում, իսկ ինքը նույն հոգաբարձության գանձապետ է դառնում, և Զատկի տոնին մի-մի կամ երկու-երկու ռուբլի փող է բաժանում այն աղքատ կնիկներին և տղամարդերին միայն, որոնց տարվա ընթացքում շատ անգամ յուր տանը կամ մետաքսի գործարանում ձրի ծառայեցրել էր. և չի էլ հայտնում նրան, թե այդ փողերը ձեր անունով հավաքված նվիրատվության փողեր են, այլ այնպես է ցույց տալիս, թե յուր գրպանիցն է տալիս:

ՓՈԽԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՂԱՎՆԻՆԵՐ

(Տուրգենևից)

Ես կանգնած էի սեպացած բլուրի գագաթի վրա, իսկ իմ առջև սփռված է հաճարի հասունացած արտը. նա երբեմն ծածանվում էր ոսկյա գույնով, երբեմն տարածվում էր արծաթյա ծովի նման և պսպղին էր տալիս:

Բայց ալիքները բնավ չէին օրորվում այդ ծովի վրա, խեղդող օդի անշարժությունը գուշակում էր մի մեծ փոթորիկ:

Իմ շուրջը արեգակը դեռևս լուսավորում էր իր ջերմ և աղոտ լույսով, իսկ այնտեղ, հաճարի արտի մյուս կողմում, ոչ այնքան հեռու, մուգ-կապտագույն մառախուղը ահագին կուտակությամբ բռնել էր երկնակամարի ամբողջ կեսը:

Ամեն ինչ լռության մեջ էր... ամեն ինչ հառաչում էր արեգակի վերջին ճառագայթների փայլման ներքո: Չէր լսվում, չէր երևում ոչ մի թռչուն, թաքնված էին մինչև անգամ ճնճղուկները: Միայն մի ինչ-որ տեղ, մերձակայքում, մենավոր ջրածաղկի խոշոր տերևները համառ կերպով շշնջում էին և թափահարում:

Ինչպես սաստիկ բուրում էին դաշտերի խոտաբույսերը: Ես նայում էի կապտագույն ամպակույտի վրա... մռայը տիրում՝ էր իմ սրտում: Դե՛, շուտով, շուտով, մտածում էի ես, փայլատակի՛ր, ոսկեղեն օձ, դղրդացի՛ր որո՛տ, շարժվի՛ր, գլորվի՛ր, հեղվի՛ր, ո՛վ չար մառախուղ, վե՛րջ տուր այդ տխուր հեծությանը:

Բայց մառախուղը անշարժ էր: Նա առաջվա նման ճնշում էր անմռունչ երկիրը... միայն, կարծես թե, ավելի ուռչում էր և մթնանում էր:

Եվ ահա նրա միագույն կապուտակության վրա նշմարվեցավ մի ինչ-որ բան, որ սլանում էր հարթ — հավասար կերպով, կարծես թե իսկ և իսկ մի սպիտակ թաշկինակ լիներ կամ ձյունի պատառ: Դա մի սպիտակ աղավնի էր, որ թռչում էր գյուղի կողմից: Թռչում էր, թռչում էր, միշտ միևնույն ուղիղ գծով... և խորասուզվեցավ անտառի հետևում:

Անցավ մի քանի վայրկյան, — դեռ տիրում էր միևնույն խիստ լռությունը: Բայց նայիր: Այժմ նշմարվում են երկու թաշկինակներ, ձյունի երկու պատառներ ետ են սլանում: Դրանք երկու սպիտակ աղավնիներ են, որ թռչում են դեպի տուն հավասար թռիչքով:

Եվ, ահա, վերջապես պայթեց փոթորիկը, և սկսվեցավ բնության կատաղի խաղը:

Ես հազիվ կարողացա փախչել մինչև տուն: — Քամին մռնչում էր, սոսկալի կերպով պտույտվում էր: Պատառ-պատառ եղած շիկագույն ամպերը ներքևից առաջ էին մղվում: Ամեն ինչ տակնուվրա էր լինում. խառնաշփոթության մեջ էր. դղրդում էր: Անձրևի սարսափելի տարափը ջրային սյուների նման ցած էր թափվում: Կայծակների հրեղեն-կանաչագույն փայլատակումը աչք էր կուրացնում: Որոտի ընդհատվող բոմբյունը կարծես թե թնդանոթներից էր արձակվում: Փչում էր ծծմբային հոտը...

Բայց կտուրի ծածկի տակ, երդիքի կողքին, միմյանց մոտ նստած են երկու սպիտակ աղավնիներ — և այն, որ թռչում էր իր վարուժանի հետևից, — և այն, որին բերեց նա և կարելի է, ազատեց նրան:

Երկուսն էլ գուրգուրում էին միմյանց — և յուրաքանչյուրը շոշափում էր իր թևիկով դրացու թևը:

Երջանի՛կ էին նրանք: Եվ ես ինձ երջանիկ էի զգում նրանց վրա նայելով... Թեև ես միայնա՛կ եմ... միայնա՛կ, ինչպես միշտ:

ՖԻՐԴՈՎԱԻ

I

ՓՈՔՐԻԿ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Արևը բարձրացավ և իր ջերմ, պայծառ ճառագայթներով լուսավորեց ցածրիկ տնակների սպիտակ պատերը: Իսկ հեռաստանում՝ լայն և ընդարձակ տարածվում է մերկ անապատը, որի միջով գեղածիծաղ հոսանքով և քմահաճ պտույտներով ոլորվում է Հալմենտ գետակը, անհայտանալով մանիշակագույն մռայլի մեջ:

Ահա, ուղիղ գետեզերքի պարզ և խաղաղ ջրերի մոտ հանգչում են մի քանի տնակներ և որպես հայելու հարթ ապակու վրա, ցոլանում են ջրերի մեջ: Դա Թուսն2 է, որ խորասուզված է մրգաբեր այգիների մեջ, իսկ նրա շուրջը ձգվում է մերկ, լայնատարած անապատը, որ վերջանում է հորիզոնի վրա նկարվող կապտագույն լեռներով:

Ախորժելի է սաղարթախիտ, դարևոր չինարի հովանին: Տերևների թեթև խոնավությունը, բացված վարդերի սքանչելի բուրմունքը — բոլորը փաղաքշում է, բոլորը փայփայում է այրող տոթից

վաստակած մարդուն: Փոքրիկ Աբդուլը լավ ծանոթ է այդ տեղի հետ, դա հեռու է ամեն բնակությունից, այստեղ ոչ ոք չէ խանգարում նրան: Պառկած մետաքսի նման փափուկ խոտերի վրա և, նիհար ձեռքերը նեցուկ տված գեղեցիկ գլխին, որ զարդարած է նախշուն արախչինով, խորասուզված է մի մեծ հին գրքի ընթերցանության մեջ, որը համարյա անգիր գիտե: Նա միշտ կարդում է այդ գիրքը, իսկ երբ հոգնում է, փակում է իր հրաշալի, երկայն թերթունքով հովանավորված աչքերը և, ձեռքերը գլխի տակին դրած, ամբողջովին անձնատուր է լինում իր սիրելի, մտավոր ցնորքներին: Անցնում են դրպեներ, անցնում են ժամեր, արևը խոնարհվում է դեպի իր գիշերային մուտքը, թռչունները սկսում են ճլվլալ, զգալով ամենաթեթև փոփոխությունները օդի մեջ, — իսկ փոքրիկ Աբդուլը կամ, որպես կոչում են նրան տանը — Հիմարը, դեռ պառկած է, հրապուրված իր երևակայական պատրանքներով: Նրա առջևից անցնում են պատկերներ, մինը մյուսից ավելի հետաքրքիր:

Ահա ծխային կույտերի մեջ փայլում են բոցավառ կրակներ, Ժողովուրդը ամբոխվում է այստեղ, բարձրանում են մոգերի ձեռքերը, լսվում են ձայներ, որ երգում են փառաբանություն անմահ աստվածներին: Ահա Շամիրամի շքեղ պարտեզները: Կիտրոնիների և դեղձենիների ոսկեգույն պտուղները փայլում են արեգակի առջև, ճեմում են մանկահասակ կանանց և սիրուն պատանիների ուրախ, գույնզգույն խումբերը, իսկ ինքը, վեհափառ թագուհին, շրջապատած շքեղափայլ նաժիշտներով, քաղցր նիրհում է փափուկ բարձերի վրա իր մարմարյա ապարանքներում:

Ահա ժայռերի բարձրավանդակի վրա կանգնած է անմատչելի ամրոց: Սուլելով, շառաչելով դուրս է թռչում այնտեղից մի ահռելի վիշապ և հարձակվում է հպարտ, մանկահասակ փեհլևանի3 վրա, որը արիաբար ձիավարում է իր պատերազմական նժույգը: Վիշապի բերանից բոց է դուրս հոսում, սոսկալի աչքերը լցված են այրունով. նրա ճիրանները ամրացած են գետնի վրա, իսկ հսկայական օձանման մարմինը գալարվեցավ, որպես մի դյուրաթեք վագր, երբ նա նետվում է փոքրիկ այծյամի վրա:

Աբդուլը ճչալով բաց է անում աչքերը: Արդեն մութն է, աստղերը փայլում են կապույտ, անսահման երկնակամարի վրա: Օդը չոգորված է ծաղիկների անուշահոտությամբ: Նրա փոքրիկ ձեռիկները սրբում են սառն քրտինքը, որ պատել է ճակատը:

— Հիմար, որտե՞ղ ես դու, — լսելի է լինում հոր բարկացոտ ձայնը:

— Այստեղ եմ, — պատասխանում է որդին, քաղցրահնչյուն ձայնով:

Նա ուրախ էր, որ սարսափելի երազը վերջացավ և կրկին իրան գտավ իրականության մեջ:

— Դու դարձյա՛լ այդ գրքի հետ ես, ես կխլեմ նրան քո ձեռքից, եթե դու այդպես կշարունակես միշտ փախչել տնից:

Արտասուքը գլորվում է Աբդուլի աչքերից, և նա տենդային ջերմությամբ սեղմում է գիրքը բաբախող կուրծքի վրա:

— Այն հիմար Ասեղը քեզ մի լավ բան չի սովորեցնի: Գնա տուն:

Եվ գնում են հայր ու որդի դեպի փառավոր այգիի հեռավոր անկյունը, իրանց խղճուկ տնակը, ուր սպասում է նրանց աղքատիկ ընթրիքը:

Աբդուլի հայրը, Շերիֆ-շահը, Թուսի հարուստ և միևնույն ժամանակ խստասիրտ փոխարքայի այդեպանն էր, որին կոշում էին Աբու-Մանսուր-Թերկուլի:

Ամեն ինչ խորասուզված է հարավային անլուսնյակ գիշերի կապտագույն մռայլի մեջ: Ահա Աբդուլը գտնվում է իրանց տնակի տափակ կտուրի վրա: Նրա մանկական բնավորությունը սաստիկ գրգռված է հոր խոսքերից: Նա մտածում է. «Հայրս կամենում է խլել ինձանից Բոստան-Նամեն ...4 նա հայհոյում է բարի Ասեդին... Փախչե՞լ... վատությա՞մբ վճարել... ո՛չ, ո՛չ»:

Գլուխը թեքվում է մութաքայի վրա, իսկ ձեռքերը պինդ բռնած ունեն մեծ գիրքը:

Օրերը անցնում են օրերի հետևից: Գալիս է ծաղկազարդ գարունքը: Վաղ առավոտյան, երբ արեգակը դեռ չէր սկսել տոչորել, Աբդուլը վազեց իր բարի, քաղցրաբարո վարժապետի, Ասեդի մոտ:

Ժողովուրդը վժվժում է փողոցների մեջ: Տների երկայն ստվերները մուգ-մանիշակագույն բծերով ընկած են լուսավորված գետնի վրա: Ահա և բազարը: Խայտաճամուկ երևան են գալիս գույնզգույն հագուստները, մորթյա գդակները, նախշուն արախչիները և կանանց չադրաները: Կրպակների առաջը ծածկված է գոլ-գոլ փարդաներով, ապրանքները դարսած են դրսում: Այնտեղ դրած են փայլուն զենքեր — թրեր, նիզակներ, պողովատյա ոսկեզօծ սաղավարտներ և ամրակուռ, դրվագավոր զրահներ, — դրանց կարգում, մյուս կրպակի առջև երևում են զանազան տեսակ մրգերի և բանջարների կույտեր, իսկ փոքր-ինչ հեռու՝ գույնզգույն ծալքերով քարշ են ընկած կերպասների թանկագին և ամենագեղեցիկ ճոթերը: Քարվանսարայի ծածկի տակ կանգնած, խոտ են ուտում ավանակներ և ջորիներ, նրանց մոտ չոքած, հանգիստ որոճում են, երկայն պարանոցները մեկնած, բարեսիրտ ուղտերը: Ամեն կողմից աղմուկ, իրարանցում, ապրանք վաճառողների կանչյուններ, — այդ բոլորը լցնում է օդը անլռելի աղաղակներով:

Փոքրիկ Աբդուլը շտապով անցնում է գեղեցիկ կրպակների առջևից: Նրան օտարոտի է թվում այդ խառնաձայն աղմուկը, այդ կոպիտ երեսները: Նա սովորած է լսել ծառերի մեղմ սոսափյունը, թռչունների երգեցողության փափուկ և քնքուշ ներդաշնակությունը, սովորած է ականջ դնել գիշերային զեփյուռի անուշ մուզիկային: Նա շուտով թողնում է այդ խայտաճամուկ, սովորական կյանքով լի հրապարակը, և մտնում է ծածկված չարշին, որտեղ շրջապատված գրքերով, մագաղաթով ու մելանով, գտնվում է նրա բարեկամ Ասեդը: Ծերունին գրավաճառ էր:

Ճանապարհին պատահում է Աբդուլին բեռնակիր ստրուկների մի խումբ, որոնք շալակած տանում էին ապրանքների ծանր հակեր: Այդ թշվառների տանջանքը սարսափելի էր արեգակի ջերմ, կիզող ճառագայթների ներքո: Նրանց սև, կոպտացած երեսներից գլորվում էին քրտինքի խոշոր կաթիլներ, մկնակները լարված էին, ոտները դողդողում էին ամեն մի զգույշ քայլափոխի միջոցում: Աբդուլը մի րոպե փակում է իր սև աչքերը և կանգ է առնում: Նրա փոքրիկ կուրծքի մեջ կատարվում է մի անհասկանալի հուզմունք. սիրտը բաբախում է, կոկորդը ցնցողաբար սեղմվում է, փոքր է մնում, որ լաց լինի: Նա վազելով առաջ է անցնում: Ահա և ծանոթ կրպակը գոլ-գոլ փարդայով, ահա և սիրելի անձը: Նա ներս է մտնում, նրա աչքերը լցված են արտասուքով, նրան

խեղդում է հեկեկանքը: Նա շվարած կերպով գրկում է զարմացած վարժապետին և, արտասուքը կուլ տալով, հարցնում է.

— Թանգակին վարժապետ, ասա ինձ... ինչո՞ւ բոլոր մարդիկ բախտավոր չեն... Ինչո՞ւ ոմանք տանջվում են, և ոմանք ոչ...

Վարժապետի բարի դեմքը ժպտում է. նա վաղուց սովոր էր տեսնել իր սանիկի մեջ այս տեսակ հոգեկան հուզմունք: Նա վաղուց նկատել էր, որ այդ մանուկ գլխի մեջ, — որ ընդունակ էր հասկանալ ավելի, քան թե իր հասակը, — երբեմն ծագում էին ինքնուրույն մտքեր: Նա փայփայում է Աբդուլի սափրած գլուխը և քնքշությամբ նայում է նրա հրաշալի, խելացի աչքերի մեջ:

— Իմ թանկագին, — պատասխանում է վարժապետը, — այդ Աշխարհում, ուր մենք ապրում ենք, չարությունը ծնեց մարդու մեջ սեր դեպի իր անձը միայն, և անձնական ցանկությունից, որ իր համար լավ և հանգիստ լիներ, մարդը աշխատում է հաղթել բոլոր արգելքներին, որոնք խոչընդոտ են դնում նրա բախտավորությանը, առանց բոլորովին ուշադրություն դարձնելու այն բանի վրա, թե որքան իր անձնական բախտավորությունը խանգարում է ուրիշի բախտավորությունը:

Ծերունի Ասեդը սաստիկ դժվարանում էր ավելի լիակատար կերպով բացատրելու իր խոսքերը, թեև նա տեսնում էր, թե որպիսի ուշադրությամբ լսում էր իրան Աբդուլը և որպիսի ագահությամբ աշխատում էր յուրացնել նրա մտքերը: Աշակերտի փոքրիկ ձեռիկները գրկում են վարժապետի արևից այրված պարանոցը և նրա բերանը դարձյալ մի նոր հարց է առաջարկում:

— Արդյոք կգա՞ մի ժամանակ, որ մարդիկ կսկսեն սիրել միմյանց:

Եվ չսպասելով վարժապետի պատասխանին, նա մինը մյուսի հետևից առաջարկում է հարցերի մի ամբողջ շարք:

Ծերունի Ասեդը դեռ բոլորովին չէր հասկանում, թե որպիսի մեծ հոգի էր բնակվում այդ տարօրինակ տղայի մեջ: Լսելով նրա խոսքերը, նա ինքը նույնպես հրապուրվում էր:

Նրան պատմում էր Աբդուլը իր հրաշալի երազների մասին, թե որպես նա խոսակցում էր ծաղիկների և թռչունների հետ, թե որպես տեսնում էր ոգիների սքանչելի ապարանքները, — հիացած նկարագրում էր գիշերների խորհրդավոր լռությունը, լուսափայլ աստղերի դյութական ժպիտը, երեկոյան հովի մեղմիկ շշնջյունը, չինարների տերևների բազմախորհուրդ բարբառը և կանաչազարդ գետեզերքի հրաշալի գեղեցկությունը: Ավելի վառ գույներով նկարագրում էր փեհլևանների կռիվները և մոգպետների կախարդությունները, որոնց մասին նա կարդացել էր իր վարժապետից ընծա ստացած ամենաթանկագին գրքի — Բոստան-Նամեի մեջ:

Ահա կրպակի առջևից վազելով անցան մի քանի մարդիկ, որոնց հետևից մյուսները և ապա ավելի շատ բազմություն: Լսելի էին լինում աղաղակներ և փողերի հնչյուններ:

— Այդ ի՞նչ է այնտեղ: Նայիր:

Աբդուլը բարձրացնում է կրպակի փարդան և նայում է դեպի փողոցը: Նա մնում է ապշած, նրա աչքերը երբեք չէին տեսել մի այնպիսի տեսարան:

— Ե՛կ, ե՛կ այստեղ, — ձայն է տալիս Աբդուլը:

Բայց Ասեդը ընկղմված էր խորին մտածության մեջ. նա չէր կարողանում նախուգուշակել, թե ի՛նչ էր կատարվում այդ տղայի հետ, և ի՛նչ էր գոյություն առնում նրա մանուկ գլխի մեջ:

Դուրս ենք գալիս փողոցը: Զինվորների մի քանի կարգ փայլուն զրահների մեջ ամրացած, հպարտ կերպով ընթանում են ծաղիկներով սփռված գետնի վրա: Սևամորթ ստրուկները, ականջներից քարշ ընկած խոշոր գնդերով և զոլավոր կարճ շալվարներով, տանում են նրանց հետևից մի մեծ գիրք: Երկու նշանավոր աստիճանավոր, մետաղյա դրոշմավոր խույրերով և ոսկեթել փունջերով զարդարած ծիրանի աբաներով, տանում են մի սպիտակ, աշխույժ ձի, բռնած ունելով նրա արծաթյա սանձի աջ և ահյակ կողմերից: Ձիու գլուխը և պարանոցը զարդարած էր կապտագույն հուլունքներով, ոսկյա բոժոժներով, իսկ թամբը՝ թանկագին, կերպասյա տապճակով: Ձիու վրա նստած է պարզ, ճերմակ հագուստով մի դեռևս մանկահասակ այր, հեզ և պայծառ դեմքով: Նրա գլխին կապած է մի պսակ, հյուսած վարդերից: Նրա հետևից գնում են մունետիկները և ազդարարում են.

— Տվեցեք պատշաճավոր հարգանք բանաստեղծների մեծ թագավոր Անսարիին:

Ամբողջ բազմությունը գլուխ է խոնարհեցնում, աղաղակելով.

— Փա՛ռք և կյա՛նք Անսարիին:

Աբդուլը մնաց անշարժ, խորին հիացման մեջ: Նրա աչքերը արտահայտում էին տարակուսանք. «ուրեմն դա նա՞ է, որ գրել է Բոստան-Նամեն — այդ հասարակ, գեղեցիկ մարդը»:

Լի հրճվանքով աղաղակեց նա, երբ Անսարին մոտեցավ նրան.

— Փա՛ռք և կյա՛նք Անսարիին...

Անսարին ժպտում է իր հեզ ու քաղցր ժպիտով և նայում է բախտավորված համբակի վրա:

Բայց որպիսի՞ զգացմունքներ այդ րոպեում տիրում էին Ասեդին: Նրա մշտապես տխուր դեմքը պայծառացավ, նա լուծեց մեծ գաղտնիք — «Աբդուլը բանաստեղծ կլինի...»: Նա գրկում է համբակին և ջերմ ու ջերմ համբուրում է նրան:

Ծանր ու հեղձուցիչ է օդը փոքրիկ տնակի մեջ: Աբդուլը քնել չէ կարողանում: Լուսամատից երևում են փայլուն աստղերը, և սևին է տալիս արմավենու կիսաստվերագիծը: Բացված հասմիկի հոտավետ ճյուղերը լցնում են սենյակը սքանչելի բուրմունքով: Նրա աչքերի առջևից խումբ-խումբ անցնում են զինվորների կարգերը... լսելի են լինում բազմության աղաղակները... սպիտակ ձին... Անսարին... բանաստեղծը...: և փոքրիկ բանաստեղծը քնում է:

II

ՊԱՏԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Անցան տարիներ: Փոքրիկ հիմարը դարձավ գեղեցիկ, վայելչակազմ պատանի: Այժմ նրան կոչում են Աբդուլ-Գասիմ-Մանսուր: Սահուն և խաղաղ անցան այդ տարիները և, կարելի է ասել, առանձին ոչինչ չպատահեց, բայց միայն ճակատագրի խաղը:

Աբդուլը, ինչպես և նրա հայրը, պարապում էր այգեպանությամբ փոխարքայի հարուստ այգում: Անդադար պտտվում էր նա ծաղիկների մեջ, պտտվում էր իր սիրած բնության մեջ, և նրան հովանավորում էր կապույտ, լայնատարած երկնակամարը: Շա՛տ էր աշխատ լինում նրա դեռահաս գլուխը, շա՛տ էին ստեղծվում նրա մեջ կենդանի, երևակայական պատկերներ, և այդ բոլորը, հետզհետե ավելի և ավելի վառ գույներով կերպարանագործվում էր բանաստեղծական քաղցրահնչյուն խոսքերով — ոտանավորներով:

Աբդուլը չէր գրում իր մտավոր հափշտակությունները, նրանք ծագում էին նրա մեջ առանց որևիցե բացորոշ համակարգության, ծագում էին անհաշիվ, անկապ կերպով: Սովորաբար մտնում էր նա արմավենիների խաղաղ ծառաստանի մեջ, նայում էր, թե որպես հետզհետե չքանում էր երեկոյան վերջալույսի վառ կարմրությունը, որ երևում էր նրան ծառերի հպարտ, բարձրադիտակ ճյուղերի միջից, լսում էր, թե որպես սակավ առ սակավ, նվազում էր քաղաքային աղմուկը, լսում էր, թե որպես գնալով լռում էին նախշուն թռչունների ուրախ ձայները: Նրա կուրծքը ալեկոծվում էր, շնչառությունը դժվարանում էր և, միևնույն ժամանակ, նրա շրթունքներից հոսում էին խոսքեր, լի հրճվանքով, հոսում էին մաքուր, ազատ պերճախոսությամբ:

Նա խոսում էր, և ինքը հափշտակվում էր. խմբովին ծագում էին մտքեր, և նրա հիշողության մեջ հարություն էին առնում առասպելական հերոսները, նրանց կռիվները, հաղթությունները և նրանց կախարդական կյանքի դեպքերը: Ոչ սակավ անգամ նրա աչքերից վազում էին արտասուքի հորդ հեղեղներ, ոչ սակավ անգամ, խոնարհեցնելով գլուխը իր վարժապետի ուսի վրա, դառն հեկեկանքով հայտնում էր նրան այն բոլոր ցավերը, որ հուզում էին նրա սիրտը: Իսկ ցավում էր այդ սիրտը այն բոլոր բաներից, ինչ որ միայն վատ էր երկրի վրա. և ավելի այն պատճառով, որ նա տեսնում էր, թե մարդիկ իրանք են մեղավոր, որ դժբախտ են:

Արդեն վաղուց Արդուլի մանուկ գլխում սկսել էին ծագել այնպիսի հարցեր, որոնց չէր կարողանում բացատրել ոչ նա ինքը և ոչ բարի Ասեղը: Մնում էր մի միջոց միայն, այն է՝ դիմեք գիտության, — ճշմարտության հասնելու այդ միակ աղբյուրին: Ստրուկի զավակը կհասներ իր նպատակին, բնությունը շնորհել էր նրան զորեղ կամք և չափազանց սիրում էր արդարությունը: Այսօր գիշերը նա կփախչէ Ղազնին5:

Ահա երեկոյան մռայլը սկսեց թանձրանալ, երկայն ստվերները հետզհետե միախառնվեցան միօրինակ մթության մեջ, ամեն ինչ ընկղմվեցավ գիշերային խոնավության մեջ:

Արդեն գիշեր է, ամեն ինչ գտնվում է խորին լռության մեջ: Աբդուլը վրդովված անհամբերությամբ կանգնած է բակում: Նրա սրտի վրա տիրում է անհնարին ծանրություն, իսկ շուրջը թանձր խավար:

Ահա լսելի եղավ մի ինչ-որ խշխշոց... Աբդուլը ամբողջ մարմնով ցնցվում է: Խշխշոցի ձայնը կրկնվում է և այգու վանդակապատի մոտ նշմարվում է մարդկային պատկեր:

—Աբդուլ, դու այդտե՞ղ ես, — լսելի է լինում մի զգույշ ձայն:

—Այստեղ եմ... — նույնպես հազիվ լսելի ձայնով շշնջում է Աբդուլը:

Վանդակապատի դուռը ճռաց և երկու մարդկային ստվերներ անհայտացան խավարի մեջ: Աբդուլը և Ասեդը լուռ, շտապով գնում էին Թուսի նեղ, ոլոր-մոլոր փողոցներով: Ամեն ինչ քնած էր, ամեն ինչ անշարժ էր, ամեն ինչ անդորրության մեջ էր...

Մի ժամից հետո Թուսի քաղաքադռնից դուրս եկավ վաճառականների քարավանը դեպի Ղազնին: Համբերատար ուղտերը ծանրաբեռնված էին զանազան մթերքներով, նրանց պարանոցներից քարշ ընկած զանգակները աղմկում էին գիշերային լռությունը, իսկ առջևում տարածվում էր մերկ անապատ, որ միախառնվում էր երկնքի մթին կապուտակության հետ:

Նրանց հետ, ջորու վրա նստած, գնում էր Աբդուլը: Նրա հավատարիմ բարեկամ Ասեդը տվել էր և ճանապարհածախք և հանձնարարական նամակ:

Մնացի՛ր բարյավ ընդ երկար, հայրենի տնակ...

Ահա և Ղազնին, հզոր Շահ-Սուլթան-Մահմուդի մայրաքաղաքը: Ամեն ինչ այստեղ եռ է գալիս կյանքով: Խեղճ Աբդուլը բոլորովին մոլորվեցավ այդ մեծ քաղաքի մեջ: Նա մտավ առաջին հանդիպած քարվանսարան, որի քարյա կամարների ներքո, որ շրջապատում էին ընդարձակ, սալահատակ բակը, զետեղվեցան և նորեկները և ամեն տեսակ դատարկամոլ մարդիկ, որ խռնվել էին իրանց հետաքրքրությանը ճարակ տալու համար: Այստեղ, մի կողմում, իջևանել էր արևակեզ ուխտավորների բազմությունը, երկայն, կողքերը ճղած գաբաներով և կիսագնդաձև թաղիքյա գնդակներով: Մի այլ տեղ, ալևոր, թխադեմ հնդիկը, օձերի թովիչը, զարմացնում էր բազմությանը իր անբաժան դուդուկով և կախարդական սնդուկով, որի մեջ ճկուն մարմինը օղակ-օղակ գալարելով, դրած էր ակնոցավոր օձը: Փոքր-ինչ հեռու հրապարակական ձեռնածուների խումբը ցույց էր տալիս իր ճարպկությունները, մեկի ոտների մոտ, պարանոցը շղթայած, հզոր թաթերը մեկնած, պառկած էր առյուծը: Երկու մանուկներ, խայտաճամուկ հագուստներով, վզերը հուլունքներով զարդարած, ուրախ-ուրախ խոսակցում էին միմյանց հետ, կտրատելով հյութալի խարբուզակը, որի կորիզները բաժին էին հանում իրանց երրորդ փոքրիկ ընկերին — կապիկին:

Մի քանի շահիներով Աբդուլին ցույց տվին, թե ինչպես կարող էր գտնել մադրասան (դպրոցը):

Ահա լայն հրապարակը, որի մեջտեղում ճերմակ պատերով փայլում էր գիտության տաճարը: Երկյուղածությամբ ներս մտավ պատանին դպրոցի զով նախագավիթը:

Միրզա-Յուսուֆը, որին դիմեց նա Ասեդի հանձնարարական նամակով, սիրով ընդունեց իր բարեկամի աշակերտին և խոստացավ, ըստ կարելվույն, օգնել նրան, կատարելու իր ազնիվ ցանկությունը:

Մյուս օրը Աբդուլը արդեն նստած էր մադրասայում: Հետո նա խիստ հաճախ հիշում էր իր կյանքի այդ բախտավոր օրը:

Մի ընդարձակ, բարձր սենյակում, լուսավորած նեղ, սրածայր լուսամուտներով, գորգերի վրա նստած էին թալարները (ուսանողները): Նրանց մեջտեղում նստած էր բանաստեղծ Անսարին, արդեն ալևորված, բայց դեռևս նախկին ժպիտը երեսի վրա պահպանած: Պարապում էին բանաստեղծությամբ: Ուսանողները հերթով կանգնում էին և հանպատրաստից ոտանավորներ էին ասում այն բնաբանի վրա, որ տալիս էր նրանց վարժապետը:

Աբդուլը երկչոտ կերպով նստած էր հեռավոր անկյունում և ականջ էր դնում: Նա առաջին անգամ լսում էր այն, ինչ որ վաղուց գոյություն էր ստացել նրա հոգու մեջ: Նա տեսնում էր, թե որքան դժվար էր տգեղ և ծանրահնչյուն բառերով երգ հյուսելը, և որքան անտանելի էր աշակերտներին այդ աշխատանքը:

Նրա գլխում ծագեցին մտքեր. «չէ որ բոլորը, ինչ որ ստեղծել է բնությունը, գեղեցիկ է, իսկ գեղեցիկը պետք է արտահայտվի և գեղեցիկ բառերով»:

Ահա վեր կացավ մի բարձբահասակ, նիհար պատանի: Կոշտ և ծանր կերպով կազմվում էր նրա լեզվում բանաստեղծական խոսքը, բայց նա դարձյալ շարունակում էր կակազելով գործածել անճոռնի ոճեր: Անսարին անուշադրությամբ լսում էր, ուղղում էր նրան, և միևնույն բառերից երգ հորինում, իհարկե, իր ձևով և դրանով հիացնում էր աշակերտներին: Աբդուլի սիրտը սաստիկ ալեկոծվում էր, երբ լսելի էր լինում վարժապետի լիահնչյուն կոկորդային ձայնը:

Ահա Անսարիի աչքին ընկավ անծանոթ պատանին, արևակեզ թշերով և հրաշալի, կրակով լի աչքերով:

— Դու, անծանոթ պատանի, քո աչքերում նկատում եմ ես անկեղծ հրճվանք և հետաքրքրություն, ասա՛, դու եկել ես սովորելո՞ւ մեր դպրոցում:

Աբդուլը երկչոտ կերպով նայեց իր շուրջը: Տասնյակ աչքեր հառած էին նրա վրա:

—Այո՛, եկել եմ սովորելու, — դողդոջուն ձայնով պատասխանեց նա, — բայց ես զարմանում եմ, որ այստեղ սովորում են այն, ինչ որ ես արդեն, վաղուց գիտեի, առանց ոչ ոքից սովորած լինելու: — Այդ խոսքերի մեջ չէր լսվում մի նշանախեց անգամ պարծենկոտության, նրանք հնչում էին բոլորովին անկեղծ և ուղիղ կերպով:

—Բայց ո՞վ ես դու, որ առանց առաջնորդի հասել ես մինչև այդ տեղը, — հարցրեց Անսարին, և նրա շրթունքների վրա նշմարվեցավ երկմտության ժպիտը:

— Պատանի՛, — շարունակեց նա, — դու այնպես ինքնավստահությամբ ես խոսում բանաստեղծության վրա, որպես խոսում է մի ընդունված բանաստեղծ: Ինձ հաճելի է քո համարձակ, ճշմարտափայլ դեմքը, քո խոսքերը հնչում են համեստամտությամբ և անկեղծությամբ: Խնդրում եմ ցույց տուր մեզ քո արհեստը:

— Բայց ես դարձյալ կրկնում եմ, որ չեմ սովորել ոչ մի արհեստ: Ես գիտեմ միայն, որ ինքը բնությունը պահանջում է ուրիշ ձևեր իրան նկարագրելու համար: Դուք խոսում եք երկնքի և մեզ շրջապատող աշխարհի գեղեցկության մասին, բայց նրանց համար կա ուրիշ, ավելի սքանչելի խոսքեր:

Անսարիի դեմքը արտահայտում էր կատարյալ զարմացում:

— Իմ բարեկամ, դու պետք է ցույց տաս մեզ քո արհեստը: Երգի՛ր բնությունը:

—Ես չգիտեմ, ինչպես են երգում նրան, բայց եթե ծառերի հրաշալի շշնջյունը և ջրերի քնքուշ խոխոջմունքը ինձ ախորժելի են թվում, ես ուղիղ խոսում եմ հենց նրանց մասին:

—Աղաչում եմ, կարդա՛:

Պատանի Աբդուլը շփոթված կերպով կանգնեց, նրա աչքերի կոպերը ցած էին թողած, հոգու մեջ կատարվում էր սարսափելի հուզմունք, սիրտը մերթ նվաղում էր, մերթ սաստիկ բաբախում էր. ճակատի վրա երևացին քրտինքի կաթիլներ, ձեռքերը սառեցան և թեթև կերպով դողում էին, իսկ գլխումը հարություն առին հին ցնորքները, հարություն առին պայծառ կերպարանքով և տիրեցին նրա ամբողջ էությանը: Ահա հնչեց առաջին երկյուղած խոսքը, այդ լսելով, բոլորը ապշած մնացին: Հետո սկսվեց հրաշալի, քաղցրաձայն պերճախոսությունը: Հնչյունները երբեմն հեղեղվում էին, ինչպես վտակի թեթև հոսանքը, երբեմն, հանկարծ, աղմկալի ջրվեժի նման, կարծես թափվում էին անդունդի մեջ և, փշրվելով, սփռում էին հազարավոր ցայտումներ: Եվ ինքը, Աբդուլը, կարծես թե վերածնվեցավ. նրա համեստ դեմքը ընդունեց վսեմ, վեհափառ կերպարանք: Որտեղի՞ց հայտնվեցավ նրա այդ սահուն, վայելուչ առոգանությունը: Բոլորը նրա մեջ շնչում էր վստահությամբ և անիմանալի զորությամբ:

...Անտեսանելի ծառերի ոստերի ներքո,

Եվ տեսանելի երկնչի կապուտակության մեջ

Երգում են զարթնած թռչունները.

Վտակները, փողփողելով, հոսում են,

Արևի տակ վառվում են գետեզերքը,

Ցողապատ խոտը մարգարտի պես փայլում էր...

Դեռևս հոսում էր հրաշալի խոսքը, ոչ ոք չէր ընդհատում նրան ամենքը լռել էին, ամենքը սուս էին կացել:

Անսարին մոռացել էր ամբողջ աշխարհը, նա այժմ լսում էր ոչ միայն ոտանավոր, այլև ոտանավորի մուզիկան: Նա գտավ այն, ինչ որ իր ամբողջ կյանքում միշտ որոնում էր, արժանավոր ժառանգ իր բանաստեղծական տաղանդի: — Նա գունաթափված էր, հուզված էր, աչքերը լցված էին արտասուքով:

Աբդուլը լռեց: Լսելի եղավ հիացման և հրճվանքի ընդհանուր աղաղակ: Նա գտնվում է այժմ Անսարիի գրկում, լսում է իր շուրջը աղմուկ... նրա առջև երևում են զույնզգույն հագուստներ...

քունքերը սաստիկ բաբախում են... մի ինչ-որ բան ծանրությամբ ճնշում է նրա սիրտը... և պատանի բանաստեղծը ուշաթափ է լինում...

III

ԴՐԱԽՏԱՅԻՆԸ

Անցան տարիներ: Աբդուլը դարձավ Անսարիի ամենասիրելի աշակերտը, նա աշխատում էր նրա առաջնորդությամբ, նա հիմնավոր կերպով ուսումնասիրեց պատմությունը և փիլիսոփայությունը, նա գեղեցիկ կերպով տիրապետում էր իր մայրենի լեքվին: Կյանքը սկսել էր ժպտել նրան:

Շքեղ է Շահի ապարանքը, իսկ այսօր զարդարված է նա ավելի մեծահանդես և ավելի հրաշափառ կերպով:

Ուղիղ կարգով դասավորված են զինվորներ և շողշողում են իրանց փայլուն զրահներով, հնչում է երաժշտություն, ծխում են անուշահոտ բուրվառներ: Թանկագին ամպհովանիի ներքո, շրջապատած իր վսեմափայլ դրանիկներով, նստած է ինքը՝ Շահ-Սուլթան Մահմուդը: Բազմության մեջ լսելի է լինում խուլ շշնջյուն, նշմարվում է թեթև իրարանցում: Ներս է մտնում «բանաստեղծների թագավորը»՝ Անսարին և, ձեռքից բռնած, բերում է իր հետ մի հուզված, շփոթված երիտասարդի: Դա Աբդուլն էր: Բանաստեղծը ձեռքին բռնած ուներ երիտասարդի գրած առաջին պոեմայի գալարած թերթերը: Նա ծունր է դնում Շահի առջև, և Սուլթան-Մահմուդը բարեհաճությամբ ժպտում է: Բայց ամեն կողմից երիտասարդի վրա ուղղված են ժանտ և չարանախանձ հայացքներ:

Ձեռագիրը արքայի ձեռքումն է. նա նշանացի է անում և երիտասարդը սկսում է երգը Ռուստեմի և Զորաբի մասին, — բարիի ու չարի կենցաղական մեծ մաքառման մասին:

Ինքը Աբդուլը չէ կարողանում իրան հաշիվ տալ, թե ինչ է կատարվում իր շուրջը: Բայց ահա նա լսում է Շահի բարձր հրճվանքով լի ձայնը.

— Այդ օրից դու «դրախտի որդի»6 ես, և ոչ հասարակ մահկանացու: Մատուցեք արժանավոր հարգանք մեծ բանասսեղծին:

Բազմության մեջ տիրեց ընդհանուր ալեկոծություն և աղմուկ. Աբդուլին շնորհավորում էին և գրկում էին: Ահա նա նստած է սպիտակ նժույգի վրա. նրա գլխին դրած է վարդերից հյուսված պսակ, մունետիկները, նրա առջևից ընթանալով, աղաղակրում են. նրանց ձայնակից է լինում ոգևորված ժողովուրդը, գլուխները խոնարհեցնելով.

— Կեցցե՛ս, անմահ Ֆիրդովսի, և երջանիկ լինես...

Այդ րոպեում, երիտասարդի գլխում ծագում էին հին, վաղուց անցած պատկերներ: Ահա նա ինքը, որպես մի ժամանակ Անսարին, նստած է նժույգի վրա, և կրում է միևնույն տեսակ պսակ թարմ վարդերից, որպես նա: Նրա դեմքը փայլում է հրճվանքով... Նա պատրաստ է գրկել ամբողջ

աշխարհը...

Մի քանի օրից հետո գեղեցիկ Լեյլին եղավ մեծ բանաստեղծի կինը: Խաղաղ և հանգիստ անցնում է երիտասարդ բանահյուսի կյանքը. նա ամբողջովին անձնատուր էր եղած իր սքանչելի արհեստին — բանաստեղծության: Եվ նրա հանճարավոր գրչի տակից փոքր առ փոքր սկսեցին ստեղծագործվել ազգային պատմության բանաստեղծական պատկերները — «Շահ-նամեն»:

Հրաշալի երեկո էր. ամեն ինչ լուռ էր և խաղաղ: Ծաղիկների արբեցուցիչ անուշահոտությունը լցրել էր Պարսկաստանի արքայի այգին: Արևը խոնարհվեցավ, վարդագույն ամպերը, փոքրիկ խումբերով հանգիստ կերպով լողում էին երկնքի անհատակ կապուտակության մեջ: Տերևախիտ չինարիի ներքո նստած էին Շահը և բանաստեղծ Ֆիրդովսին: Բանաստեղծը հափշտակված էր իր պատմությամբ: Նա բացատրում էր Շահին իր բանաստեղծական ձեռնարկության մեծ իդեան, — բացատրում էր նրա բարձր նշանակությունը: Այդ րոպեում նա անհամեմատ մեծ էր:

— Իմացի՛ր, որ քո աշխատությունը թանկագին կլինի որպես ինձ համար, նույնպես և մեր ամբողջ հայրենիքի համար: Ես իմ արքայական խոսքով պահանջում եմ, որ դու վերջացնես այդ գեղեցիկ գործը: Եվ դու ըստ արժանվույն վարձատրված կլինես.... — ասում էր Շահը:

Անցան օրեր, ամիսներ, տարիներ: Ֆիրդովսին հաստատ հավատ ուներ դեպի իր աշխատանքը: Անվաստակելի կերպով էր նրա հանճարը և մաքուր վտակի նման հոսում էր խոսքը, նկարագրելով պայծառ պատկերներ, որ լի էին կենդանությամբ ու կրակով: Այսպես ստեղծագործվեցավ, երեսուն տարվա ընթացքում, ժողովրդական պատմությունը — «Շահ-նամեն»:

Այս աշխարհում չկա ոչինչ մշտենջենավոր, մի րոպե բախտը Ժպտում է մարդուն, իսկ մի ժամից հետո նա երեսը շուռ է տալիս նրանից, և երկար ու երկար պետք է սպասել մի նոր ժպիտի...

Մենք դարձյալ հին, մեզ ծանոթ Թուսի մեջ ենք գտնվում: Արդեն շատ տարիներ անցել էին այն օրից, երբ վարդերից հյուսված պսակը առաջին անգամ դրվեցավ բանաստեղծի գլխի վրա:

Պլպլալով վառվում էր յուղային ճրագը, և երկայն, սև ստվերները օրորվում էին փոքրիկ սենյակի պատերի վրա: Դարձյալ մեր առջևն է Ֆիրդովսին, բայց ոչ այն աշխուժով լի պատանի Աբդուլը: Ժամանակը դրել էր նրա վրա իր կնիքը, իսկ կյանքի դառնությունը գծել էր խորին խորշոմներ նրա պարզ, հարգելի դեմքի վրա: Բանաստեղծի առջև դրած էր մագաղաթի փափաթ, իսկ ձեռքումը կար գրիչ: Բայց գրիչը չէր գործում, աշխատանքը, կարծես թե, ձանձրացրել էր նրան: Նրա հիշողության մեջ հարություն էին առնում անցյալ կյանքի պատկերները:

Հիշում էր նա «Շահ-նամեի» վրա գործ դրած երկար աշխատությունները, անքուն գիշերները, անընդհատ պարապմունքները, ցերեկով... հիշում էր նա, թե որպես ուրախ և հույսերով լի վստահությամբ դրեց նա Շահի առջև իր ավարտած գիրքը: Տեսնում էր իր շուրջը ժանտատեսիլ դեմքեր, որոնք չարախնդաց կերպով ժպտում էին դեպի նա... Դա կեղծավոր, նախանձոտ բանաստեղծների մի խումբ էր, որ կոչված էին նրա աշխատանքը գնահատելու... թշնամիները հասան իրանց նպատակին, Ֆիրդովսու փառքը խորտակված էր...

Այդ միջոցին նրա ալևոր գլուխը խոնարհվեցավ, և արտասուքի խոշոր կաթիլները գլորվեցան ներս ընկած այտերի վրա:

Մտաբերեց նա, թե որպես իր նախանձորդներից բամբասված, չարախոսված, — օրորվելով դուրս եկավ նա Շահի շքեղ ապարանքից, ուր չգնահատեցին նրա բազմամյա աշխատանքը... Վարձատրությունը եղավ միայն սառն ընդունելություն և ողորմելի չնչին վճար... Մի րոպեով ոչնչացավ բոլորը...

Հանկարծ ծերուհու դեմքը կենդանացավ: Նա համոզված էր, որ ինքը արդար էր, որ ինքը մաքուր է իր խղճի առջև: Եվ եթե նախանձն ու ատելությունը ժամանակավոր ստվեր ձգեցին նրա փառավոր երկասիրության վրա, — բայց կանցնի կեղծ-դպիրների դարը և կգա մի նոր ժամանակ, լույսի և ճշմարտության ժամանակը, և ապագան կգնահատե նրա անմահ գործը:

Նա այժմ գտնվում էր հեռու Շահի անշնորհակալ մայրաքաղաքից, և իր հայրենական փոքրիկ քաղաքում, Թուսի մեջ, մշակում էր իր փոքրիկ այգին և նրա վաստակով, աղքատության մեջ, ապրում էր: Այժմ նա ավելի մեծ եռանդով շարունակում էր իր սկսած գործը, և հռչակավոր գիրքը արդեն մոտեցրել էր իր վախճանին:

Երեկոները, մինչև խորին գիշեր, խիստ հաճախ տեսնում էին Թուսի բնակիչները ճրագի լույս՝ չճանաչված և մերժված բանաստեղծի աղքատ խրճիթում: Անցան տարիներ — և լույսը հանկարծ հանգավ...

ՎԱԽՃԱՆ

Վաղուց էր, որ Թուսի մեջ չէին տեսել այնպիսի տեսարան: Փողերը հնչում էին, առաջ էր ընթանում մեծահանդես Թափորը: Զինվորներ, ստրուկներ, աստիճանավորներ, ծառաներ — բոլորը խայտաճամուկ տեսքով, անցնում էին հետաքրքիր քաղաքացիների մոտով:

Սպիտակ, գեղեցիկ նժույգները, զարդարած գույնզգույն փետուրներով և արծաթյա բոժոժներով, ծանրաբեռնված էին թանկագին քարերով, ոսկով, փիրուզայով, նախշուն գորգերով, մետաքսյա գործվածներով, քիշմիրի շալերով, փղոսկրով ու լեղակով:

Պայծառ ու ուրախ ժպիտով լուսավորում էր գարնանային արեգակը: նրանք հասան Թուսի քաղաքադռներին: Մունետիկները աղաղակում էին և նրանց ձայները խիստ զիլ կերպով հնչում էին մաքուր օդի մեջ:

— Այդպես վարձատրում է վեհափառ Շահը նախանձորդներից չարախոսված մեծաշուք բանաստեղծ Ֆիրդովսուն:

Այդ րոպեում ծանր դռները ներսից ճռնչացին, և բազմությունը ապշած մնաց, լսելով հետևյալ խոսքերը.

— Ճանապա՛րհ տվեք ուղևորին դեպի հավիտենական աշխարհը...

Երկու բարեկամներ տանում էին սպիտակ սավանի մեջ ամփոփված մի դիակ, նրանց հետևից, հազիվհազ շարժվելով, գնում էր, տրտմությունից սպանված, և ալիքներով ճերմակած ծերունի Ասեղը: Դա Ֆիրդովսու մարմինն էր: — Երկու հանդիսավոր հուղարկավորություններ դիմավորեցին միմյանց բանաստեղծի հայրենական քաղաքի դռների մոտ, նա մեռած հանդիպեց իր փառքին... Ամեն ինչ լռեց, ամեն ինչ անշարժ մնաց, հանկարծ բազմությունը երկյուղածությամբ ծունր խոնարհեց և երկրպագություն մատույց ժողովրդական անմահ բանաստեղծի աճյունին7...

ԱՄՊ

(Զրույց)

(Փոխադրեց անգլերենից Ն. Ս. Ն.-ով)

Հուլիսի տոթային օրերից մեկն էր: Արեգակը անխնա կերպով այրում էր: Հրաբորբոք օդը անտանելի էր, ամեն առարկայի վրա տիրում էր թմրություն և տաղտկություն: Թռչունները լռել էին, ծառերը ցած էին թողել իրանց ոստերը, թառամել էին սիրուն խոտերը և կպել էին գետնին: Այլևս լսելի չէր լինում դաշտային ծաղիկների ուրախ շշունջը, նրանք խոնարհեցրել էին իրանց գլխիկները և կամաց-կամաց մեռնում էին ծարավից: Կովերը, ձիաները, այծերը, հազիվհազ շարժվում էին: Չորս կողմում ամեն ինչ լռության մեջ էր. ոչ մի ձայն չէր լսվում...

Մի կողմում, օդի ջերմությամբ լցված տարածության վրա, երևում են խրճիթները, այնտեղ մարդիկ տխրությամբ նայում են դեպի ժլատ երկինքը, որ նրանց անձրև չէ տալիս: Այդ սգավոր գյուղերի մեջ այլևս լսելի չեն լինում ոչ ծիծաղ, ոչ հանաքներ և ոչ ուրախ երգեր: Մինչև անգամ երեխաները, թուլացած օրվա տապից, մոռացել էին իրանց խաղը և սիրելի փողոցները, սուս էին կացել, և թաքնվել էին մարագներում...

Երաշտությունը սարսափելի դժբախտություն է շինականի համար, որը ապրում է միայն դաշտային դառն աշխատանքով: Երաշտությո՛ւն — դա մի դանդաղ մահ է հազարավորների համար, մահ աղետալի և սովատանջ: Նա աղքատացնում է մինչև անգամ և նրանց, որոնց մոտ փոքրիշատե պահվել էր ուտեստի հին պաշարից... Շինականները հասկանում են այդ և տրտմությամբ նայում են դեպի երկինքը:

Ամբողջ երկու ամիս նրանք ողորմություն են սպասում երկնքից, — բայց դեռ ոչ մի կաթիլ անձրև չկա... Այրվեցավ խոտը, այրվեցան անտառները, նիհարացան, լղարեցան տավարները:

Մարդիկ հուսահատված թափառում են ինչպես ուրվականներ...

Արդեն մի քանի անգամ բարի քահանան, սուրբ մասունքներ, խաչ ու պատկեր իր հետ տանելով, անդաստան կատարեց անտառների և դաշտերի շուրջը, աստուծուց անձրև խնդրելով: Շինականների ջերմեռանդ բազմությունը հաստատ հավատով և արտասվախառն աղոթքներով շրջապատել էր նրան: Զորավո՛ր է հավատը այդ խեղճ, համբերող մարդիկների մեջ...

Ահա բաց-կապտագույն երկնքի վրա երևաց ամպի մի փոքրիկ: թափանցիկ պատառ: Նա նմանում է մի սպիտակ թաշկինակի, որ հազիվ է նշմարվում: Նա կամաց-կամաց լողում է, կարծես թե վախենալիս լինի... Տառապյալ շինականները տեսան նրան, և նրանց վշտալի սրտերում ծագեց

հույսի մի պայծառ նշույլ... Մոտ էր փրկությունը սովատանջ մահից... Բայց փոքրիկ է ամպիկը, գուցե մի րոպեից հետո նա կանհետանա երկնքի անսահման կապուտակության մեջ... Ո՛չ, նա չի դավաճանի, կցողե երկիրը բարեբեր անձրևով...

Սպիտակ ամպիկը մեղմ սիրով նայում է անբախտ գյուղերի վրա, տխուր խրճիթների վրա, և հետզհետե աճում է, հավաքում է իր ուժերը փրկելու սովատանջներին:

— Իզո՛ւր ես աշխատում, — փաղաքշելով ասում է նրան արեգակի կիզող ճառագայթը: — Թո՛ղ նրանք տանջվեն, դու ինչո՞ւ ես հոգ տանում նրանց կյանքի համար: Դու կանգնած բարձրում, փայլում ես ոսկու մեջ, իսկ նրանք այնտեղ ներքևում, թավալվում են իրանց փոշիների մեջ... Քեզ ի՞նչ պետք են նրանք: Դու
կոչնչանաս, կմեռնես, նրանց ազատելով: Մի՞թե ավելի լավ չէ քեզ համար լողալ երկնքի կապուտակության մեջ, խաղալ մեզ հետ, սլանալ հողմի թևքերի վրա և զվարճանալ լի կյանքով:

— Թո՛ղ տուր քո խորհուրդը, — թոթովեց թեթև հողմիկը, — թո՛ղ նրանք մեռնեն սովից, քեզ ի՞նչ փույթ հոգալ նրանց մասին... անձնատուր եղիր իմ մեղմ հոսանքին, և կսկսենք ուրախ կերպով լողալ արեգակի հրապուրիչ ճառագայթների մեջ...

Իսկ սպիտակ ամպիկը դեմքը խոժոռեց և դժգոհությամբ երեսը շուռ տվեց, թե ուրախ ճառագայթից և թե զբոսասեր հողմիկից: Նա սկսեց աճել և մթին գույն ստանալ: Վերջապես բոլորովին ծածկեց արեգակի շողշողուն ճառագայթները և ականջ չդրեց նրանց ձանձրալի խրատին, թե «կմեռնես... կոչնչանաս... ինչո՞ւ ես դու հոգ տանում ուրիշների համար... մտածի՛ր միայն քո մասին... ապրի՛ր միայն քո համար...»:

Ամպը ականջ չդրեց իր օդային բարեկամներին և շուտով այնքան աճեց, որ դարձավ ահագին սև մեգ, որը սիրալիր կերպով ցած էր իջնում թշվառացած դաշտերի և տխուր ծառերի վրա: Լսելի եղավ խուլ դղրդյուն, որը հետզհետե սաստկանալով, սկսեց որոտման մի հարվածը մյուսի հետևից ավելի բարձրաձայն տարածել նիհար անտառների, հեռավոր լեռների մեջ և խրամատների մթին խորշերում, — և օձի նման գալարվելով, նշմարվեցավ կայծակը... մի անգամ ևս, մի անգամ ևս... Տեղաց առատ, զովացուցիչ անձրև: Երկար հեղվում էր նա, ոռոգելով ամեն մի արմատը տոչորված խոտերի, տխուր խնձորենու, համբերատար ընկուզենու, սգավոր ուռենու, և նրանք ագահությամբ ծծում էին նրա զովացուցիչ կաթիլները... Ծառերը սկսեցին ազատ շունչ առնեի խոտերը կանաչ գույն ստացան, ծաղիկները վեր բարձրացրին իրանց գլխիկները, թռչունները սկսեցին ծլվլալ, երեխաները դուրս թափվեցան դեպի փողոցները, սկսեցին կազմել լճակներ վազող վտակներից, ձգելով այստեղ և այնտեղ իրանց շինած նավակները, շատ հեռվից լսելի էր լինում նրանց ուրախաձայն ծիծաղը: Կյանք ստացան գյուղերը և դաշտերը...

Ամպը կատարելով իր բարի գործը, ճշմարիտ է, մեռավ, ցած թափվելով փրկարար անձրևի ձևով: Բայց նա մեռավ հաճելի մահով: Նրա կյանքը սպառվում էր ժպտելով, երբ նայում էր զվարթացած ծառերի վրա, պայծառ խոտաբույսերի վրա, ուրախ ծաղիկների վրա: Եվ նա կորչելով երկրի ընդարձակ տարածության վրա, զգում էր, որ մեռնում է ոչ առանց օգուտ բերելու, կանաչած խոտը, հարություն առած բնությունը, շինականների ուրախ դեմքերը, — նրա գործն էր... Այնուհետև ամպը բարակ շերտերով սկսեց առաջ լողալ. թռչունների ուրախ ձայները, ծաղիկների ու դաշտային խոտաբույսերի սոսափման անուշ մեղեդին առաջնորդում էին նրան, մինչև նա աննկատելի կերպով անհետացավ երկնքի անսահման կապուտակության մեջ: Նա կորավ

այնտեղ, վերևում, իսկ կաթիլների ձևով սկսեց ապրել այստեղ, ներքևում, ամեն մի թուփի, ամեն մի բույսի, ամեն մի մեծ և փոքր կենդանու մեջ...